

ՉՈՓՈՒՌ / ՉՈՒՐՆԱՀ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ախապե՞ր, ես մի վախտ չարվադարություն ի անում: Մի հետ մի քանի ընկերներով կարտով տարանք Շորացյալ ծախելու: Լոռու մի մատուահն էլ կարտովն ա, ին գիտե՞ք: Մի քանի հետ էլ մեղք եմ տարել ծախ: Ամա մեղրից իւեր չկա: Ասած ա. «Չամիչը հատ-հատ, մեղքը մատմատ կհատնի»:

Հա՛, զնացինք հասանք Տաշղալա: Էնտեղից էլ ճամպա բռնեցինք դպա Մաստարա: (Մաստարեն մի ձորի միջի ա: Լավ ախապրնի ունի): Ճամպին մեզ մի մարդ ուստ էկավ, որ մի քյահլան ձի նստած՝ գնում էր Գյումրի՝ (Ալեքսանդրապոլ):

Նա ասավ.— Կարտովք կտանեք մեր տունը:- Ես էղ գեղի գալավան եմ: Կասեք Էրոյի տղա Արթենի տունը ո ըն է:

Նա հանեց իր տերողորմեն նշան տվուց, զնացինք զլավնու տունը: Դեռ բեռները վեր չենք բերել պատմեցինք զլավնու բսպարանքը ու նշանը տվինք:

Բեռների վեր բերելն ու տաղթմիշ անելը մին էլավ. հարևաննին թոփ էլան, նրանցից ամեն մինը մի հակը տարավ: Գլավնու ախապերն ամեն մին հեղեկից ձեն էր տալի. «Ծո՛, իմ ալ կտանեք, եմալ էլ բերեք»: Կարճ ժամանակում մեր կարտովնին ցորենի դառան: Կարտովք ցորնի բարեբար վեր կալան:

Էղ րիգուն զլավնանց տանը մեզ մի լավ պատիվ տվին: Նրանք ուրիշ դոնախնի էլ ունեին: Էղ դոնախնու մեջ մի բոյով ու շահել քուրդ կար, քոլոզը ծածկած: Ինքն էլ լավ հարնված: Ամա ընթափուր չոփուր էր, որ զարմանալի: Չեշու չեր, որ ասեիր ծաղկամնա ա:

Սաղ էրեսը փոս-փոս էր, ոնց որ կտրատած, յա պուճուր դրով ծակծկած: Նա շատ թամուզ հայերեն խոսում էր, լսողը, հեռի հավատիցը, հենց իմանում էր, թե հայ ա:

Ես նրանից վեր քաշված ու զարմացած նրան հարցրի.— Ամոք չըլի հարցնիլն, ախապեր, էղ շնչիցն ա քեզ էղ չոփուռությունը պատահի՞լ:

Նա ծանող ախ քաշեց ու քոլոզը վեր կալավ: Գլուխը բացվեց:

Գլսի կաշին պոկ էկած էր: Մի հատ մազ չկար գլխին: Գլսի դափաղի ոսկորն էրսում էր: Ես սարսափեցի: Նա քոլոզն էլ եղ դրեց գլխին ու պատմեց հետևյալը՝ իր գլսի եկածը.

— Որ ասում ես, ախապեր ջան, պատմեմ էս պլոկած գլխիս էկած փորձանքը: Ես Երևանցի Զաֆար աղի տղեն եմ, անունս է Զոռ-Մուստաֆա: Սաղ մրհալումը մեր պես անումով, հարուստ ու զյուտ օջախ չկա: Առաջ էլ անումով աղա ինք, ամա տկլոր աղա ինք: Հորս՝ Զաֆար աղի, սադ հարստությունն ու պարձանքը ես ի: Իմ ընկերների, իմ թայ ու թուշի մեջ մի հատը քաջ տղա չկար: Ամեն տեսակ ձի սովորցնել, քյամանդ գցել-բռնել, հեծնել, թուր ու թվանք բանացնել, նիզակ ձոձել, դալիսան պահել— էս բոլորն ինձ համար խաղ ու պար էր: Իմ թայ դոչաղ տղերանցից ոչ մինն իմ ոստով չէր գալի: Մեր մրհալումն իմ կուտն ոլորող տղա չկար: Ես փակլվանի ու իգիրի համբավ հանեցի: Բոկ շնորքով, բոյով ու բուսաթով ինձ հավասար մինը չկար: Երեխությունից իմ մազերս, որ ոսկի գույն ունեին, չեին խուզել: Քանքուլներս՝ վախտ հուսած, վախտ փաթթած գլխիս, վախտ վերարձակ թողած՝ ինձ ավելի շնորք էին տալի: Ինչ խաղ լիներ՝ ջիրիդ լիներ, որս գնալ լիներ, հարսանիքներում ու մեյդաններում ձի խաղնել լիներ, թվանքով նշանի գցել լիներ— ես ի առաջինը: Ինձ ոչ մի բանում զոռ անող չկար: Դրա համար իմ անունը դրին Զոռ-Մուստաֆա: Հերս ինձ ջահել օրով հարսանիք արավ: Սադ Երևանու մրհալում աղջիկ չճարեց, զնաց Կաղզվանից ինձ աղջիկ ուզեց: Զոռ հարսանիք արինք: Անցավ մի քանի վախտ: Իմ կնիկը մի անգամ զնաց հորանց: Մենա ախապերն էկավ

տարավ: Մի էրկու շաբաթից գնացի Կաղզվան, որ նրան բերեմ: Իմ աներն էլ հարուստ օջախ էր, հինգ-վեց տղա ուներ:

Մի էրկու օր մնացի Կաղզվանում: Էղտեղ ծանոթացա մի դավրիշի հետ: Էղ դավրիշն ասավ, որ ինքն էլ պիտի զա Երևան. միասին գնանք: Խնդրեց, որ մի քիչ ճամպա պահեմ, որ ինքն իր համար մի ձի ճարի ու մեզ հետ զա:

(Մենք՝ ես ու կնիկս էլ նրան ճամպա չպահեցինք, ըղու էլանք, ճամպա ընկանք):

Կաղզվանից մի քանի վերաստ դեռ չենք հեռացել, եռ մտիկ արինք, տեհանք, որ մի ձիավոր ա զալի: Գալիս ա ամա ընթափուր զժիզ տված ա զալի, ոնց որ երկնքից կրակ ըլի զալիս: Թող ու դումանը պատել էր աշխարիլ: Կնիկս ասավ.— Արի փախչենք, հարամի ա զալի:

Ես անկաջ չարի, ասի.— Ես Զոռ-Սուստաֆան ըլիմ ու մարդուց ու հարամուց վախենա՞մ:

Չիավորը էկավ հասավ:

Դարվիշն էր մի քյահլան ձի նստած: Մեզ բարեւեց, ու ընկերացավ: Մտանք Կաղզվանա մերին: Երբ որ հասանք մերու մեջտեղը, ճամպեն էրկուսի էր բաժանվում՝ մինք մենձ ճամպեն էր, մինն էլ մի կածան, որ տանում էր դպա մերու դալնկուտը: Դավրիշն էդ ճամպեն բռնեց: Իմ կնիկն էլ, ոնց որ թոկով կապված, նրա եղեից իր ձին քշեց: Ասի.— Այ կնիկ, էդ ո՞ւր ես գնում, մեր ճամպեն էդ չի:

Նա անգաջ չարավ ու դավրիշի ետևից գնաց: Ես ձիով աղաքը կտրեցի: Դավրիշը գոռաց.— Էդ իմ կնիկն ա, ի՞նչ իրավունքով ես աղաքը կտրում:

Ես կատաղեցի ու ձիուց իջա: Նա էլ իջավ: Ու մեր մեջ սաստիկ կորիվ սկսվեց: Սկզբում ոնչ ես ի գոռում, ոնչ նա: Էրկուս էլ կրփում էինք արշերի նման: Վերջում նա հետզհետե թուլանում էր, իսկ ես ուժեղանում, քիչ էր մնում, որ նրան գետնովը տայի: Էդ վախտը կնիկս ձիուցը վեր էկավ ու ոտիցս բռնեց: Նրանք էրկուսով ինձ վեր զցեցին: Սրտիս հերսից խելքս զլիսից թոավ: Էն իմացա, որ անիրավ դավրիշը երկար մազերս՝ քանքովներս մի բանի փաթաթեց: Աչք բաց արի տեհա, որ մի բարձր կաղնի ծառից մազերիցս կախված եմ: Դավրիշն ու կնիկս կորել են: Չիս մոտս կանգնած խրխնջում էր, կատաղությունից խելքս կորավ: Դուն ինձ ասա՝ թուրը վրես, դամեն վրես, դանակը զիբս, մազերս իմ ձեռքով կտրելու տեղը՝ ինձ սաստիկ

թափահարեցի, ձլորթի ընկա ու ընկա ներքեւ: Մազերս պոկ ընկան: Գլխիս կաշին էլ հետը պոկվեց: Գրլիսիցս արուն շատ գնաց, ամա ես ինձ չկորցրի, զլուխս փաթաթեցի, ձիս հեծա ու նրանց գնացած ճամպով գնացի: Գնացի հասա մի մենձ էրի դուռ: Տեսնիմ ներսը դարվիշն ու կնիկս քեֆ են անում: Կատաղած վրա ընկա, որ դավրիշին խեղդեմ: Մեր մեջ էի մի սարսափելի կորիվ սկսեց: Ապանն ու դափլանն էղպես չեին կովիլ: Ես ոնց որ յարալու գազան, դավրիշին քիչ մնաց զլիսի ծերն հանեմ ու գետին զարկեմ, հոգին փլի: Էդ վախտը կնիկս նրան օգնության հասավ: Քած շան նման սկսեց կծոտել ձեռքերս, ծնկներս ու կուրծքս: Դավրիշը սիրտ առավ ու երկուսով ինձ գետին զլորեցին: Էրի առաջ բած դուզ ծառին ինձ թուկով կապեցին՝ ոտներիցս մինչև վիզս: Ու իրանք նստեցին միրգ ուտելու: Մի մենձ թարախանով լիքը բաղդատու խուրմա կար աղաքները: Էն անիրավ դավրիշը սկսեց ուտել խուրմեն ու կորիզներն էրեսիս փշել: Կորիզներն զալիս էին էրեսիս դիպչում, ոնց որ զյուլլա՝ էրեսս ծակծկում: Էն անիրավը վոազ-վոազ ուտում էր խուրմեն ու կորիզները կարկտի պես թափում էրեսիս: Ես հազիկ աչքերս էի պահում: Սաղ էրեսս ծակծկվեց արունվիկ էրավ: Միրտս մղկտում էր, զիգյարս կտրատվում: Ամա ես ձեն ծպտուն չեի հանում, մի անգամ «օֆ» չարի: Իմ էդ վարմունքը ավելի էր կատաղացնում էն սատայելին: Վերջն էդ լրբերը՝ դավրիշն ու իմ

դախաղա կնիկը՝ իրենց քեֆը քաշելուց եղը, իմ աչքի աղաքին պառկեցին ու շնթռեցին. խոր քուն մտան, երսի ինձ մեռած կարծելով: Նրանց քնելուց եղը ես սկսեցի ատամներով ինձ փաթաթած կոներս կապած թոկը կրծոտել: Կրծեցի, կրծեցի, թոկը կտրեցի: Ետո կամաց կապերս արձակեցի: Թուրս ուսլուբով¹ վերցրի, որ էրի պատից կախել էին: Ու հոգեառի պես դավրիշի զլխավերևն անցա: Աջ ձեռքով թուրս պահած, ձախ ձեռքով մազերիցը դայիմ քաշեցի, նա աչքը բաց արավ, զարհուրանքով ինձ մտիկ արավ ու ուզաց վեր թռչի: Ամա ես ժամանակ չտվի, թրով գլուխը թռցրի: Անզգամ կնիկս էլ զարթնեց: Ես նրան չսպանեցի, ձեռք ու ոտքը կապուեցի: Եղո մտա էրի մեջը ման էկա. ի՞նչ տենիմ: Էրի խորքում հինգ հատ քահլան ձի կապած, մինը մնուց լավը, աղաքները չամիչ լցցրած: Քիչ էլ աղաք գնացի մենձ մաղարա էր: Տեսնիմ մի տեղ ոսկի կիտած, մի տեղ էրծար: Մի կրանս էլ շատ խաս կտորներ՝ մախմուր, աթլաս ու հազար ու մին խաս ու դումաշ դասած: Թողի, դուս էկա: Ես իմ ձիուն նստեցի. կնկանս էլ իրա ձիու վրա կապկպուտեցի ու եղ գնացի Կաղզվան անորանցս տունը: Գիշեր էր: Անորը տղեքը դուս էկան: Նրանք մեզ տեհան ու զարմացան. ինձ էլ որ մտիկ արին, զարհուրեցին: Աներս ու մեկել տանըցիք էլ նրանց երնուց դուս թափեցին: Ես պատմեցի եղելությունը: Անորս մենձ տղեն որ մի դոչադ ու նամուտվ տղամարդ էր, էդ բանը որ լսեց, կատաղեց: Էլ ժամանակ չտվուց. «Աննամուս», գոռաց, իր թուրը քաշեց ու կնկանս՝ իրա քրոց, գլուխը թռցեց: Բոլորն էլ ասին. «Հախն Էր»... Էդ զշեր ինձ իրանց տանը պահեցին: Սյուս ըռավոտը ինձ իրանց փոքր քրոց հետ պսակեցին ու ճամպա դրին: Ես անորս մենձ տղին հետս վերցրի, երբ հասանք մերին, ես նրանց իմ թագա կնկանս ու իր մենձ ախառոր տարա թուշ էն էրի դուռը: Վեր էկանք: Անորս տղի հետ ներս մտանք: Բոլոր ոսկին ու էրծարը, էն խաս ու դումաշ ձոր ու կտորները բեռներ բռնեցինք: Դուրս քշեցինք դավյրիշի հինգ ձիանը ու բարձեցինք, հինգ ձիաբեռ էլավ: Էրկու ձիաբեռը տվի անորս տղին, իսկ իրեք ձիաբեռը ես վեր կալա: Նա գնաց իրանց տուն, ես էլ իմ թագա կնկա հետ էկա մեր տունը: Շատ չքաշեց հերս՝ Զափար աղեն, դարդից մեռավ: Իմ բերած հարստությունը նրա աչքին չէր գալիս, քանի որ նրա աչքի լույս Զոռ-Մուստաֆեն զրկվել էր իր ամենամենձ հարստությունից՝ էրեսի գեղեցկությունից, ոսկեքանքուլ մազերից, մի խոսքով իրա շնորհալի քիսպաթից²: — Ղարիբ ախապեր, — դարձավ ինձ Զոռ-Մուստաֆեն, — թուրքն ասում ա. «Քիսպաթ դա բիր դովլաթ դըր»³: Հմի ես էդ դովլաթից որ առաջ իմ պարծանքն էր, զրկված եմ ինձ պատահած էդ փորձանքի էրեսից:

¹ Ուսլուբ-զգուշություն—Ծ. Բ.:

² Քիսպաթ—դեմք, պատկեր—Ծ. Բ.:

³ Քիսպաթ դա բիր դովլաթ դըր—Գեղեցիկ դեմքն էլ հարստություն է.—Ծ. Բ.: